# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարա- տի մարզի «Ավշարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստա- վորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստա- տությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի, - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապա- տասխան՝ աշխատանքային ստաժի վերա- բերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկա- յության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացինե- րը՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենա- լու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պա- տասխանատու անձը փաստաթղթերի մնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ մնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթե- րի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 16-ից մինչեւ մարտի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքա- յին օրերից: Մրցույթը տեղի կունենա մարտի 3-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Ավշարի միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահա- րել՝ (093) 93-93-31 հեռախոսահամարով: